ՆԵՐՔԻՆ ԽԱՉԵՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIV—XV ԴԴ.

Բ. Ա. ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

Միջին դարերում Խաչենի իշխանությունը կարևորագույն դեր է խաղացել Արցախ նահանգի Առանշահիկ նախարարական տունը դիմացավ պարսկական ու արաբական տիրապետության փորձություններին, իսկ սելջուկյան բռնագրավումների շրջանում ամրացավ նահանգի լեռնային ու նախալեռնային մասերում և լուրջ դիմադրություն էր ցույց տալիս եկվոր բռնակալներին։

Թաթար-մոնղոլական արշավանքների նախընթացին Խաչենի (նախկին Արցախի) իշխանությունն արդեն բաժանված էր երեք ճյուղի՝ Ներքին Խաչենի կամ Խոխանաբերդի տերեր, Հաթերքցիներ և Ծարեցիներ։ Իշխանության երեք ճյուղերի ներկայացուցիչները գիտակցում էին իրենց տոհմակցությունը և ենթարկվում էին գահերեց իշխանապետին։ XII դ. վերջին ու XIII դ. սկզբին ամբողջ Խաչենի տարածքում՝ Սևանի ափերից մինչև Գանձակի մատույցները, գահերեցը կամ Մխիթար Գոշի խոսքով՝ «գլխաւոր այլոց իշխանացն» էր Հաթերքի տեր Վախտանդը, որի հայրենաշեն գործունեությունը հայտնի է պատմական աղբյուրներից և հատկապես նրա հովանավորյալ Մխիթար Գոշի հիշատակարաններից։ Վախտանդի մահվանից հետո և հատկապես թաթար-մոնղոլական արշավանքների շրջանում փոխվում է պատկերը. գահերեցությունն անցնում է Ներքին Խաչենի տեր Վախտանդի շրջահայաց որդի Հասան-Ջալալ Դոլային, որն իրեն կոչում էր՝ «բնակաւոր (բնիկ—Բ. Ու.) ինքնակալ բարձր և մեծ Արցտխական աշխարհի, թագաւոր Խաւխանաբերդի՝ յոքնասահման նահանդաւք»[1]։ Հասան-Ջալալի թագավորական տիտղոսն ընդունում էին ինչպես հայ մյուս ավատատերերը[2], այնպես էլ օտարները[3]։

Հասան-Ջալալի ողբերգական վախճանից (1261 թ.) հետո Ներքին Խաչենի իշխանությունը ժառանգում է նրա որդի Աթաբակը, որի իշխանապետության օրերում թաթար-մոնղոլները տիրել էին ամբողջ Անդրկովկասին։ Տեղական իշխանություններն այլևս չունեին վաղեմի հզորությունը, չանում էին լսելու դնել նոր տիրակալների հետ և իրենց տիրույթները փրկել կողոպուտից ու ավերածություններից։ Խաչենն ու հարևան լեռնային և նախալեռնային գավառները, որոնք Հայաստանի համար պատվարի դեր էին կատարում

---

1 *Տե՛ս Գանձասարի վանքի շինարարության վերաբերող մեծ արձանագրությունը՝ տաճարի ներսի հյուսիսային պատի վրա։*

2 *«Արարատ», 1896, էջ 81, 234, «Բանասեր», 1901, հ. III, պրակ Բ, Գ, էջ 135, Մ. Բարխուտարևանց, Արցախ, Բաղու, 1885 (այսուհետ՝ «Արցախ»), էջ 189։*

3 Миклухо-Маклай Н. Д., „Географическое сочинение XIII в. на персидском языке". Ученые записки института Востоковедения. т. IX, 1954, стр. 204. *Այստեղ պարսկալեզու տարեղիրը վկայում է, որ «Խաչենը դժվարամատչելի մարզ է, լեռների ու անտառների մեջ։ Այն Առանի նահանգներից է։ Այնտեղ հայեր են (բնակվում)։ Արխազի (Վիրքի) մարդիկ նրանց փադիշահին կոչում են թագավոր»։*

արևելքից եկող ավերիչ հորդաների դեմ, XIII դ. ցնցող մի շարք հարվածներից հետո, XIV դ. շատ էին թուլացել և այլևս անզոր էին գիմադրելու օտար ասպատակիչներին։

Ջլատվել էին նաև տնտեսական ու մշակութային ուժերը։ Համարյա ոչինչ չէր կառուցվում։ Երկրի երբեմնի բարեշեն գյուղաքաղաքներն ու բերդամրոցները կիսավեր վիճակում էին, վանքերում ու եկեղեցիներում այլևս չկար նախկին խլրտուն հոգևոր կյանքը։ Այս համընդհանուր ողբերգական վիճակի մասին կցկտուր տեղեկություններից բացի, դժբախտաբար, մենք ժամանակի հայ իշխանությունների քաղաքական կյանքը հանգամանորեն ներկայացնող տեղեկություններ չունենք։ Սրանով պիտի բացատրել մի թյուրիմացություն, որ ընդունված է պատմագիտության մեջ և աղավաղում է Խաչենի իշխանության իրական պատկերը XIV դ.։ Թյուրիմացության ակունքը Կարապետ եպիսկոպոսի (Կարապետ Տեր-Մկրտչյան) մի եզրակացությունն է, որի համար անառարկելի հիմքեր չեն վկայակոչված, և հենց այդ պատճառով ինքը՝ ուսումնասիրողն էլ իր կարծիքը հրապարակ էր հանել կասկածով ու թերահավատությամբ։ Խաչենի իշխանության մի ճյուղի՝ Ծարա տեր Դոփյանների քաղաքական պատմությանը նվիրած իր հետազոտության մեջ նա այն կարծիքն էր հայտնել, թե «...Հասան Ջալալ Դոլա իշխանից, մանավանդ նորա որդի Աթաբակից հետո՝ ԺԳ դարի վերջում, այս տոհմի իշխանությունը նսեմացած է երևում»[4]։ Ապա՝ «...ԺԵ դարու վերջի արձանագրությունները ցույց են տալիս, որ այս տոհմը կրկին զորացել էր Խաչենում, մանավանդ ժառանգական դարձնելով իր մեջ Գանձասարի կաթողիկոսությունը»[5]։

Մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ այստեղ պատճառն ու հետևանքը փոխել են իրենց տեղերը. Գանձասարի կաթողիկոսությունը Հասան-Ջալալյանների ժառանգական արտոնությունն էր դարձել այն պատճառով, որ այդ տոհմի իշխանավորները հզոր էին ու նվաճեցին կաթողիկոսությունը և ոչ թե ժառանգեցին ու դրանով էլ զորացան։

Աղբյուրագիտական ի՞նչ հիմքեր էր առաջարկում Կարապետ եպիսկոպոսը՝ ի հաստատումն XIV դ. Հասան-Ջալալյանների նսեմանալու մասին իր կարծիքի։ Նախ՝ որ Գանձասարի XIV դ. վիմական արձանագրություններում հանդիպել է Դոփյան տոհմին հատուկ անունների՝ Ուլուբեկ, Սայտուն, Այտին, Շահանշե և այլն[6]։ Ապա՝ «որ արդեն Դոփյան Հասան Բ-ի օրերից ի վեր նորա կալվածների շարքում է հիշվում Ականա բերդավանը[7]։ Եվ, վերջապես, որովհետև «Կեչառեցու ողբի մեջ ուրիշ հայ իշխանների թվում այս տոհմից (Հասան-Ջալալյաններից—Բ. Ու.) ոչ ոք չի երևում. ուստի զարմանալի չէ, եթե սահմանակից Դոփյանները հառաջացած լինեին նաև նոցա կալվածներում»[8]։

Դժվար չէ նկատել, որ հետազոտողի վկայակոչած երեք կռվաններից ոչ մեկը կամ էլ երեքը միասին՝ ի զորու չեն հաստատելու, թե XIII դ. վերջից մինչև XV դ. վերջը Հասան-Ջալալյան իշխանական տունը նսեմացած էր։

---

4 Կարապետ եպիսկոպոս, Դոփյանք և Մելիք-Շահնազարյանք. նյութեր հայ մելիքության մասին, պրակ Բ, էջմիածին, 1914 (այսուհետ՝ «Դոփյանք»), էջ 93։

5 Նույն տեղում, էջ 94։

6 Դոփյանք, էջ 93։

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում։

Գանձասարի վիմագրերից քաղված անունները միայն Դոփյան իշխանություններին չէին հատուկ, իսկ, որ ավելի կարևոր է ու քիչ հետո կտեսնենք, նշված անունները հենց Հասան-Ջալալյաններինն էին և ոչ թե Ծարա Դոփյաններինը։

Ակնա բերդավանը Ծարեցիների արձանագրություններում նրանց հայրենի սեփականությունն է հայտարարված XIV—XV դդ., որովհետև այն գտնվում էր Ծարա տարածքում (Թարթառ գետի վերին ավազանում)։ Եվ եթե Կիրակոս Գանձակեցին, խոսելով Հասան-Ջալալի տիրույթների մասին, հիշում էր նաև Ականան[9], ապա սոսկ այն պատճառով, որ Հասան-Ջալալն ամբողջ Խաչենի, նույնիսկ ավելի մեծ նահանգի՝ Արցախի, գահերեց տերն էր համարվում։ Ինչ վերաբերում է Խաչատուր Կեչառեցու ողբում թվարկված անունների շարքում Հասան-Ջալալյանների բացակայությանը, ապա դա ևս լուրջ հիմք չի կարող համարվել, քանի որ Կեչառեցին «Ողբում» հիշում է իր ժամանակ՝ XIII դ. վերջում[10] արդեն վախճանված կամ նահատակված լոկ մի քանի իշխանների և ոչ թե Հայաստանի բոլոր նշանավոր ավատատերերին[11]։

Կարապետ եպիսկոպոսի այս կարծիքն ընդունել են մեր մի շարք պատմաբաններ։ Օրինակ, XIII—XIV դդ. Հայաստանի քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմության մասնագետ Լ. Հ. Բաբայանը համաձայն է նրա հետ և գրել է. «1282 թ. հետո Հասան-Ջալալի տոհմի մասին ոչ մի հիշատակություն չկա։ Կարծում ենք՝ իրավացի էր Կարապետ եպիսկոպոսը, երբ գրում էր. «Հասան-Ջալալի տոհմի իշխանությունը, նրա որդի Աթաբակի մահից հետո՝ XIV դ., թուլացել էր և, ամենայն հավանականությամբ, նրանց տիրույթներն անցել էին Դոփյաններին։ Հետագայում, XV դ. վերջում, այդ տոհմը նորից զորացել էր»[12]։

Այդ կարծիքին է հետևում նաև երիտասարդ ուսումնասիրող Դ. Կիրակոսյանը, որն այս առթիվ վերջերս գրել է. «Սկսած 1282 թ. մինչև 1383 թ. աղբյուրներում Հասան-Ջալալյանների մասին հիշատակությունների չենք հանդիպում...», ապա անդրադառնալով Կարապետ եպիսկոպոսի հայտնած ենթադրությանը, ավելացնում է. «Այս միտքը (Կարապետ եպիսկոպոսի ենթադրությունը.—Բ. Ու.) հաստատում են XIV—XV դարերում Դոփյանների թողած որոշ արձանագրություններ, որոնցում Դոփյան իշխաններն իրենց տեր են համարում Ակնա, Հանդաբերդի, Հաթերքի, Խաչենի և այլ վայրերի։ Հարյուրամյա լռությունից հետո, 1383 թ. սկսած, ժամանակի աղբյուրները նորից սկսում են խոսել Ջալալյանների մասին»[13]։

Աղբյուրների ուշադիր քննությունը, սակայն, ցույց է տալիս, որ, ճիշտ է, թաթար-մոնղոլական տիրապետության հաստատումով թուլացել էր Ներքին Խաչենի իշխանությունը (ինչպես և հայկական մյուս մեծ ու փոքր բոլոր իշխանությունները), բայց և այնպես Հասան-Ջալալյանները կային ու մնում

---

9 Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն հայոց», Երևան, 1961, էջ 359։

10 Դարեղին կաթողիկոսը փաստարկելով հաստատել է, որ Կեչառեցու ողբը գրվել է 1295 ու 1298 թթ. արանքում (տե՛ս Դարեղին կաթողիկոս, Խաղրտկյաց կամ Պոռչյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս, 1969, էջ 176)։

11 Տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 527։

12 Л. О. Бабаян, Социально-экономическая и политическая история Армении в XIII—XIV веках, М., 1969, стр. 189.

13 Գ. Կիրակոսյան, Հասան-Ջալալյան իշխանական տունը XV դարում (Լրաբեր, հաս. գիտ., 1969, № 5, էջ 88)։

էին իրենց ժառանգական կալվածքների տերը՝ ինչպես ամբողջ XIV դ., այնպես էլ հետագայում։

Ամաբասի եպիսկոպոս Ներսեսի արձանագրությունը Գանձասարում՝ 1282 թ., հարկավ, վերջին տեղեկությունը չէ Աթաբակի մասին, ինչպես ենթադրվում էր։ Դրանից հետո Աթաբակն իշխանությունը վարել է ևս հինգ տարի և ժամանակագրի վկայությամբ՝ մահացել է ՉԼԶ (1287), բնության ծանր արհավիրքից. «Զմեռն խիստ եղեւ։ Մեռան մեծ իշխանք ի Խաչեն՝ Աթաբակ որդի Զալալին և Հասան թոռն Դաւիթին»[14]։ Եվ Աթաբակին էլ անմիջապես փոխարինել է նրա որդի Զալալը, որի մասին վիմագրական տեղեկություն ունենք. «Յիշխանութեան Զալալին ես Խոսրովբեկ՝ որդի Խոյդանա միաբանեցա սուրբ ուխտիս ընծաիւք... թվ ՉԽԲ» (1293),— գրել է հաթերքցի իշխանազունը[15]։

Ըստ որում Զալալի իշխանությունը բավականին ակնառու երևույթ է եղել, եթե այն հարկադրված էր նշել նաև Հաթերքի տերը՝ Խաչենի իշխանության մյուս ճյուղի պայազատը։ Համանման արձանագրություն կա նաև Գանձասարում. «Ես Աբուքան եւ ամուսին իմ Մինա միաբանեցաք սուրբ ուխտիս յիշխանութեամբ Զալալին եւ յառաջնորդութեան Յովհաննէսի, տուաք Զարեքղար եւ այլ ընծա... թվին ՉԿ» (1311)[16]։

Որոշ ժամանակ անց մի այլ նվիրատու նույն Գանձասարի վանքում քանդակած իր արձանագրությամբ այսպես է հաստատել Զալալի իշխանությունը. «Ես Գերգ որդի հայրապետայ (և) ամուսին իմ Մինա, յիշխանութեամբ Զալալին, միաբանեցաք սուրբ ուխտիս, տուաք ընծա։ Տէր Յոհաննէս և միաբանքս տվին պատարագ Նոր կիրակէին... թվին ՉԿէ» (1318)[17]։

Գանձասարի վանքի հյուսիսային պատի վրա կա նաև մի անթվական արձանագրություն, որով Պետրոսի որդի Սարգիս քահանան պատմում է, թե «իշխանութեամբ Զալալին» միաբանել է վանքին ու տվել «Ե (5) գիրք և այլ ընծայ»[18]։

Հիշատակված Զալալն անշուշտ Աթաբակի որդին է և Հասան-Զալալի թոռը։ Զալալի մասին սույն արձանագրությունը գտնվում է Աթաբակի իշխանության վերաբերող (Ամարասա եպիսկոպոս Ներսեսի 1282 թ.) արձանագրության կողքին, և տառերի գրչական առանձնահատկություններն էլ աներկբայորեն վկայում են, որ երկու արձանագրությունները քանդակված են միևնույն ձեռքով։

Ուշագրավ է, որ XIV դ. սկզբներում արդեն, երկրամասի քաղաքական իշխանության հետ միասին, հոգևոր իշխանությունը ևս անցել էր Հասան-Զալալյաններին։ Եթե իշխան Զալալը Աթաբակի որդին էր և Հասան-Զալալ Դոլայի թոռը, ապա արձանագրությունների մեջ հիշատակված Գանձասարի

---

14 Ստեփանոս եպիսկոպոսի տարեգրությունը. Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հ. I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 48։

15 Արցախ, էջ 170։ «Բանասեր», 1901, հ. III, պրակ, Բ, Գ, էջ 137։

16 Շահխաթունեանց Յովհ. եպիսկոպոս, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, էջմիածին, 1842 (այսուհետ՝ «Շահխաթունեանց, Բ»)։

17 Առաջին անգամ արտագրել է Հ. Ա. Օրբելին (տե՛ս ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի արխիվում պահվող «Надписи Гандзасара и Навоц Птука, Пгр., 1919» (այսուհետև՝ «Գանձասար, № ...») գրքույկի տպագրական առանձնատիպ, էջ 25։

18 Սարգիս արքեպիսկ. Զալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 190։

առաջնորդ Հովհաննեսն է Հասան-Ջալալի եղբայր Իվանեի որդին էր։ Այդ նա էր, որ դեռևս Աթաբակի օրոք և նրա հրամանով 1271 թ., վանքի առաջնորդը լինելով, վանքի համար իր «հալալ արդեանցով» գնեց Վարդանաթաղը (թե՞ Վարնդաթաղը), «մին չորեցեղն» և այլ ընծաներ։ Նա հենց այս արձանագրության մեջ ներկայանում էր որպես «Յոհանէս որդի Իւանէի»[19]։

Եվ կարևորն այն է, որ իշխանազուն Հովհաննեսի եպիսկոպոսությունը մի պատահական երևույթ չէր. հետագայում արդեն Գանձասարի ու Մեծառանից ս. Հակոբա վանքերի առաջնորդներ պիտի ձեռնադրվեին բացառապես Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցիչները։

Ջալալ իշխանի հետագա կյանքի մասին մեր ձեռքի տակ տեղեկություններ չկան։ 1361 թ. արդեն իշխանության գլուխ էր կանգնած մեկ ուրիշը՝ Մեծ Հորջորջված Իվանեն։ «Թվ. ՊԺ (1361) իշխանութեամբ Մեծի Իւանէի ես տէր Կոստանդ մեծ փափագանաւք գնեցի զանգականիս (զանգակները.— Բ. Ու.), սուրբ ուխտս բերի»[20]։

Իվանե Մեծի մասին, դժբախտաբար, ուրիշ տեղեկություններ չունենք։ Սակայն դժվար չէ նրան տեղավորել Հասան-Ջալալյանների տոհմացանկի մեջ իրեն վերապահված օղակում, այսինքն՝ համարել Ջալալ Մեծի որդին, քանի որ վերջինս ավագ որդուն պետք է կոչեր իր հոր անունով, իսկ Ջալալի հոր անունը, ինչպես հայտնի է մի բարձրարժեք ձեռագրի հիշատակարանից, Իվանե է եղել և միայն հետագայում լրացուցիչ կերպով է կոչվել Աթաբակ։ Ջալալ Մեծի պապ Հասան-Ջալալը իր կողակից Մամքանի և միակ արու զավակի՝ Մոնղոլիայի մայրաքաղաք Կարա-կորում գնալ-գալու մանրամասներն է պատմել իրենց տոհմական սեփականությունը հանդիսացած ձեռագրի (Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 378, թ. 8բ—9ա) հիշատակարանում։ Այստեղ նա երկու անգամ հիշատակում է որդու անունը. առաջինում՝ «ես եւ ամուսին իմ Մամքան եւ տեառնատուր մանուկս իմ Աթաբակ չոգաք ընդ արեւելս հիւսիսոյ...», երկրորդում՝ «...պարգևէ ղխաղաղութիւն հոգւոյ և մարմնոյ և միոյ մանկանս իմ Իւանի...»։

Ինչպե՞ս է պատահել, որ Խաչենի իշխանն իր միակ տղային կոչել է և՛ Աթաբակ, և՛ Իվանե։ Այս հարցին կարելի է պատասխանել միայն Հասան-Ջալալի աներձագ, Վրաց թագավորության Աթաբակ Իվանե Զաքարյանի հանգամանքով։ Հասան-Ջալալի միակ արու զավակը ծնվել է այս Իվանեի փառքի ամենածաղկուն օրերում և, պարզ է, կոչվել է քեռու անունով՝ Իվանե։ Սակայն Զաքարյան Իվանեի անունից անբաժան է եղել և նրա տիտղոսը՝ աթաբակ, որ նշանակում է թագավորազնի հայր, դաստիարակ և թագավորության գործերի կառավարիչ։ Ամենայն հավանականությամբ, նորածին Իվանեին ևս, ըստ սովորության, կոչել են այդպես՝ Աթաբակ Իվանե, ուր «աթաբակ»-ն արդեն ոչ թե տիտղոս էր, այլ անվան մաս։ Իսկ հետագայում նրան կարող էին կոչել և՛ Իվանե, և՛ Աթաբակ, ինչպես որ հայր Հասան-Ջալալին էին կոչում ինչպես միա՛յն Հասան, այնպես էլ միա՛յն Ջալալ։

Հետո կտեսնենք, որ Հասան-Ջալալի որդին հետնորդների հիշողության մեջ երկու անվամբ էլ հայտնի էր. եթե թոռը կոչվում էր Իվանե, ապա սրա հետնորդների համար ավելի նախընտրելի էր Աթաբակ անունը։

---

19 «Գանձասար», № 10։

20 «Գանձասար», № 18։

Ամեն պարագայի՝ Ջալալ Մեծն իր ավագ որդուն կոչել էր պապի անունով՝ Իվանե, և սա էլ իր ավագ որդուն պիտի կոչեր պապ Ջալալի անունով։ Այդպես էլ եղավ։ XIV դ. վերջին արդեն Ներքին Խաչենի իշխանն էր Իվանե Մեծի (Բ) որդին, որին ժամանակագիրը պատվում է «պարոն» տիտղոսով. «ՊԼԲ-ն (1383) էր, մեհեկի ամսի ԻԶ-ն (26) էր[21], որ կազմեցաւ, որ է սուրբ աւետարանս Մեծակողմանց Խաչենոյ եպիսկոպոսարանէն մայրաքաղաքէն, իշխանութեամբ պարոն Ջալալին, եպտութեամբ տէր Գրիգորին Գեռաքարեցին»[22]։

Ուշադրության արժանի է Գրիգոր Գեռաքարեցու առաջնորդ լինելը Ծարա իշխանության հոգևոր կենտրոն Խաթրավանքում (Մեծկողմանց եպիսկոպոսարանում)։ Գեռաքարեցիք, ինչպես համոզիչ հաստատել է Գարեգին կաթողիկոսը, Ներքին Խաչենի տերերից էին, Հասան-Ջալալյանների ու Խաղբակյանների մերձավոր տոհմակիցները[23]։ Վկայակոչված փաստը խոսում է այն մասին, որ Ներքին Խաչենի իշխանության հոգևոր ազդեցությունը ևս տարածված էր Վերին Խաչենի կամ Ծարա տարածքի վրա։ Սակայն տվյալ պարագային մեզ համար առավել կարևորը Ծարա հոգևոր կենտրոնում ընդօրինակված ձեռագրի բովանդակությունն է. հիշատակագիրն այստեղ առաջին հերթին հիշեցնում է պարոն Ջալալի իշխանությունը։ Դա աներկբայորեն նշանակում է՝ տեղի իշխանները ստորադասված էին Ներքին Խաչենի տեր Ջալալին։ Իսկ մենք գիտենք, որ այս ժամանակներում Ծարա իշխանն էր Հասան Ծարեցին, ըմբոստ ու հայրենասեր այն իշխանը, որն իր գերդաստանի շատ անդամների հետ միասին նահատակվեց 1387 թ. և մտավ Գրիգոր Ծերենց Խլաթեցու հայտնի չափածո վիպասանության մեջ[24]։

Ուրեմն, XIV դ. երկրորդ կեսում ևս Ներքին Խաչենի իշխանությունը ոչ միայն նսեմացած չէր կամ նրա ներկայացուցիչն ստորադասված չէր Ծարա տեր Դուքյաններին, այլև գահերեց էր վերջիններիս և նույնիսկ մի այնպիսի նշանավոր իշխանի հանդեպ, ինչպիսին Հասան Դուքյանն էր, որի մասին, ի թիվս Լանկ-Թամուրի նահատակած հայ ապստամբ իշխանավորների, Գրիգոր Խլաթեցին գրել է՝

21 «Մեհեկի» հին հայկական տոմարի VII ամիսն էր, որը համապատասխանում էր հունվարի կեսից մինչև փետրվարի կեսն ընկած ժամանակին։

22 Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 6288, թ. 112ա։ Հմմտ.. Արցախ, էջ 263։ Ավետարանի այս և նախորդ ու հաջորդ հիշատակարանները, ձեռագրի հանգամանալից նկարագրությունն ու քննությունը տե՛ս Գ ա ր. արքեպ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Հաղբատի դպրոցի մի գլուխ գործոց (Գետաշենի ավետարանը)։ «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության», պրակ Ա, Երևան, 1935, էջ 41—75)։

Այս ավետարանը՝ գրված XIII դ. սկզբին (1211 թ.) Հաղբատավանքում, 1223 թ. Անիում դնել է ոմն Սարգիս և Հասան-Ջալալի իշխանությամբ բերել ու նվիրել իր սննդյան (ուսման և դաստիարակության) տեղի Մեծկողմանց եպիսկոպոսարանին՝ Խաթրավանքին (այժմյան Վաղահաս գյուղից 6—7 կմ հյուսիս-արևմուտք, Թարթառի աջ ափին, քավուտ անտառով ծածկված մի բլրի վրա)։ Վերոհիշյալ հիշատակարանը գրվել է 1383 թ. մեհեկի 26-ին, ավետարանը վերակազմելու և նորոգելու առթիվ։

Մ. Բարխուտարյանցը հիշատակարանի «եպիսկոպոսարանէն մայրաքաղաքէն» կապակցությունից ենթադրում էր, թե «այդ ժամանակներում եպիսկոպոսանիստ աթոռն եղած լինի մեր ծանոթ մայրաքաղաքին մեջ» (Արցախ, էջ 263, ծան. 2)։ Սակայն հայտնի է, որ հաճախ մայրաքաղաք էին կոչվում բոլոր խոշոր վանքերը, կարևոր եպիսկոպոսանիստները։

23 Տե՛ս Գ ա ր ե գ ի ն կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 14—17։

24 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401—1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խ ա չ ի կ յ ա ն, Երևան, 1955 (այսուհետ՝ «ԺԵ, Ա»), էջ 275—276։

Այլ և զՀասանն Ծարեցին
Երեք որդւովն զենեցին.
Զի ըզնոցին ամուրն առին
Եւ զբազումս գերեցին[25]։

Խաչենի իշխանապետական այս վիճակը չփոխվեց նույնիսկ XV դ.։ Դարասկզբին Լանկ-Թամուրի հրոսակներին փոխարինելու եկան կարա-կոյունլու Թուրքմենները, որոնք իրենց առաջնորդ Կարա-Յուսուֆի գլխավորությամբ ոչնչացրին Թամուրյան պետության ժառանգորդների իշխանությունը և հաստատեցին իրենցը, որը պետք է տևեր ավելի քան 50 տարի (1407—1468 թթ.)[26]։ Կարա-Կոյունլուների տիրապետությունը մի աննախադեպ չարիք էր Արևելյան Հայաստանի և հատկապես Խաչենի համար։ Դանձասարի վանքի առաջնորդ, վարդապետ և դրիչ Մատթեոս Մոնոզոնը[27] սրտի կսկիծով արձանագրում էր, թե «դառնացաւ ժամանակս, և թագաւորեաց ոմն Թուրքման՝ անունն Ուսուֆ, զի Հանաչիւր ըստ թույլ տալոյն աստուծոյ լինել կշտամբիչ, ըստ այնմ թէ զչարսն կորուացէ, զի ի բառնալ գազանին չորրորդի Թամուրն կոչեցեալ Կաղն, բռնացեալ Ուսուֆն... Վայրենացեալ զինուորք նորա ուր և հասանէին, որ զընտանիսն գիտեն և ոչ զօտարսն, թալանեն և կոտրեն զձեռնհասն իւրեանց, թէ ի ճանապարհին, թէ ի տան, թէ առանձին, թէ քաղաքի, և այսպէս ոչ կայր թիւ աղաղակի մերոյ... Եւ դեռևս ի տարակուսի եմք՝ ո՞չ գիտելով, թէ յառաջիկայսն զի՞նչ ծնանի մեզ և կամ թէ որպե՞ս տի զերծանիմք զայսպիսի դառն նեղութեանցս...»[28]։

Մատթեոս Մոնոզոնի հիշատակարանը 1417 թ. է և արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Ներքին Խաչենի նախորդ տարիների վիճակից։ Նա պատմում է հարևան հայկական գավառներին հասած չարիքները, վկայում, որ հայ իշխանությունները քայքայվել էին օտար բռնակալների տիրապետության ներքո, և իշխանավորներն իրենց խեղճ գոյությունն էին քարշ տալիս «ընդ ձեռամբ անօրինաց»։ «Իսկ տանն Խաչենոյ բարեպաշտ ոմն կայր՝ Զաղայ անուն, այն փոխեցաւ յաստեացս, և մնացեալքն յազգէ սորին՝ Զալալն Ի։ որդիքն նորին և որդիք Զաղային՝ Արղութէն և Զալալադալէն, և եղբարքն նորին Էլէգումն և Էրէգանն Է՛ն ի ներքոյ ձեռին անօրինացն. և այսպէս պակասեալ է իշխանութիւն տանս Հայկազեան»[29]։

Մատթեոս Վարդապետի հիշատակարանի համաձայն՝ 1417 թ. Ներքին Խաչենի իշխան Զաղան արդեն վախճանված էր, իսկ մեզ ծանոթ Զալալ Մեծը, ինչպես և նրա ու Զաղայի որդիները գտնվում էին «ի ներքոյ ձեռին անօրինացն», որ հավանաբար, նշանակում է՝ հպատակ էին կարա-կոյունլու տիրուղտողներին։

---

25 «ԺԵ, Ա», էջ 275—276։

26 Լ. Ս. Խաչիկյանը Թամուրյան Արու-Բաքրի պարտությունը Կարա-Յուսուֆից դնում է 1406 թ. ապա (տե՛ս «ԺԵ, Ա», էջ X)։ Տաթևի գրիչ Հովհաննեսը Յուսուֆի գահակալության սկիզբ է համարում 1407 թ. «...եկեալ ի վերա սորա (Յուսուֆի—Բ. Ու.) թոռն Թամուրին կոչեցեալ Աբու-Բաքր, և Յուսուֆս տիրէ թագաւորութեան ի թվականիս Հայոց ՊԾԶ (1407)-ի, մարերի ամսոյն ի ԻԵ (25), մայիսի ամսոյն Թ (9) (տե՛ս ԺԵ, Ա, էջ 82—83)։ Այս տարին է հիշում նաև Տաթևի մի այլ գրիչ՝ Մատթեոս վարդապետը (նույն տեղում, էջ 76)։

27 «Դանձասար», № 19։

28 Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 8689, թ. 89ա, բ։ Հմմտ. ԺԵ, Ա, էջ 194—195։

29 Նույն տեղում, թ. 88բ, ԺԵ, Ա, էջ 194։

Զազան իշխանության գլուխ էր կանգնած դեռևս 1407 թ., թերևս նրանից առաջ էլ։ 1407 թ. ունենք Մեջլիսի որդի Ուլուբեկի արձանագրությունը, ուր ասվում է. «զիմ հայրենի հողն Ղուլտանոսի կտուրն, որ ի Վարդան բերանցէ իւր սարհատաւն ի սուրբ ուխտս Գանձասարայ իմ հոգւոյ յիշատակ յառաջնորդութեան Մատթեոս վարդապետին և իշխանութեան Զազին»[30]։

Մեջլիսը Ջալալի որդիներից էր[31], որը դեռևս 1383 թ. իր հայրենի նահանգի իշխանն էր և այս արձանագրությունից 10 տարի հետո էլ կենդանի էր՝ օտարների տիրապետության ներքո։ Ջալալը մահացել է 1431 թ., երևի խործերության մեջ։ Գանձասարի վանքի գավթում է գտնվում նրա շիրմաքարը՝ հետևյալ կարճ տապանագրով. «Այս է հանգիստ Մեծին Ջալալի, աղաւիս յիշեցէք թվ. ՊՁ»[32]։

Դառնանք այն հարցին, թե ովքե՞ր էին Գանձասարի վիմագրերում հիշատակված Ուլուբեկը, Այտինը, Սեյտին (Սատոն) և Շահանշեն, որպիսի անունները Կարապետ եպիսկոպոսին թվացել են հատուկ միայն Ծարա Դոփյան իշխանազուններին, և այս հիմքի վրա էլ հետազոտողը եզրակացրել է, թե XIV—XV դդ. Գանձասարն ու շրջակաները գտնվում էին Դոփյանների տիրապետության տակ։

Ահա Ուլուբեկի ինքնահորջորջումը մի հիշատակարանից, որով հաստատվում է, որ նա Հասան-Ջալալյան տոհմից է, Աթաբակ Բ-ի որդի Ջալալ Մեծի որդին. «Ուլուպէկս՝ որդի Մէջլիսին, թոռն Մեծին Ջալալին...»[33]։ Այս հիշատակարանը գրվել է 1456 թ.՝ Հասան-Ջալալյանների միջև բացված հողային վեճի առիթով[34]։

Շահանշեն Հասան-Ջալալյան Զազայի հետնորդներից էր. նա իրեն ներկայացրել է այսպես. «Ես Շահանշէս՝ որդի Մեհրապին, թոռն Արղութինի[35]»։ Եվ ըստ Մատթեոս Մոնոզոնի հիշատակարանի՝ Արղութինը Զազայի որդին է եղել[36]։

Այտինը Հասան-Ջալալյան Աթաբակի որդին էր՝ ըստ իր իսկ արձանագրության. «Ես՝ Այտինս, Խիմշէս՝ որդիք Աթաբակին...»,—քանդակել է նա ՋԽԴ (1495) թվականին[37]։

Սայտու-Սեյտի անունը ևս խորթ չէ Հասան-Ջալալյան տոհմին։ Գանձա-

---

30 Շահխաթունեանց, Բ, էջ 374—375։

31 Արցախ, էջ 187։

32 «Գանձասար», № 21։ Գ. Կիրակոսյանը, խոսելով Զազայի և նրա ժամանակի անցուդարձերից, այն կարծիքն է հայտնում, թե Ջալալը Զազային է հաջորդել, «քանի որ Զազայի եղբայրները, ինչպես նշում է գրիչը, գտնվում էին անօրենների ձեռքում, իսկ նրա որդիները, հավանարար, անչափահաս էին, այդ պատճառով իշխանությունն անցել է Ջալալին։ Ջալալն իշխել է մինչև XV դարի 40-ական թվականները...» (տե՛ս Լրաբեր, հաս. գիտ., 1969, № 5, էջ 89)։ Սակայն հենց սրանից առաջ ինքը՝ Գ. Կիրակոսյանը խոսել էր 1383 թ. հիշատակարանով նշված Ջալալի իշխանության մասին (նույն տեղում, էջ 88) և ապա՝ 1431 թ. մահացած Ջալալի իշխանությունը չէր կարող շարունակվել մինչև նույն դարի 40-ական թվականները, որքան էլ 1456 թ. կամ նույնիսկ ավելի ուշ Հասան-Ջալալյաններին վերաբերող նյութերում հիշատակվի նրա անունը (նույն տեղում, էջ 89—90)։ 1456 և 1471 թթ. նրա անունը տրված է սոսկ որպես մի նախորդի, որի ժառանգները կանգնած են իշխանության գլուխ։

33 Արցախ, էջ 187։

34 Նույն տեղում։

35 Նույն տեղում։

36 Մատենադարանի ձեռ. № 8689, թ. 88բ, հմմտ. ԺԵ, Ա, էջ 194։

37 «Արցախ», էջ 177։

սարի մի արձանագրությամբ Սայտունը հայտնում է. «...ես՝ Սայտունս, որդի պարոն Աղբաստի, տվի իմ հայրենեաց զՏանձաձոր ի սուրբ ուխտս Գանձասարայ...»[38]։ Աղբաստի ով լինելու հարցին սպառիչ պատասխան է տալիս վերոհիշյալ դիրը՝ հորինված տոհմակիցների հողային վեճի առթիվ։ Վեճը հարթող իշխանապետն էր պարոն Աղբաստը, որն իրեն ներկայացնում էր որպես «որդի Ճալալին» (Ջալալ Մեծ)[39]։ Այսպիսով, Ջալալ Մեծի որդին Աղբաստն էր, իսկ Աղբաստի որդին՝ Սայտունը։

Ուրեմն, այս անունները, որոնք Հասան-Ջալալյան իշխանական տան XV դ. հավաքական պատկերն են տալիս, դարձյալ գալիս են հաստատելու այդ տոհմի անկանգ հոլովույթն իր տիրույթների վրա։

XV դ. սկիզբը ոչինչ չէր փոխել Խաչենի իշխանության երկու ճյուղերի փոխհարաբերություններում։ Դարձյալ գերադաս էին Հասան-Ջալալյանները, և Մարա Դոփյանները ենթակա էին նրանց։

1411 թ. Մարա Դետամիջի վանքում Թովմա Սյունեցու գրած հիշատակարանը հենց այդպես էլ ներկայացնում է վիճակը։ Ներքին Խաչենի տեր Ջաղան (Հասան-Ջալալյան) համարված է ամբողջ Խաչենի ու Մարա տանուտերերի (իշխանավորների) գլխավորը։ Հիշատակագիրը պարտք է համարում բարի խոսքով հիշել իր պատվիրատուներին՝ Մարա իշխանական տան կենդանի ներկայացուցիչներին, ապա՝ «յիշատակ եղիցի և ի սմա աղատացն տանս Դաւրեանն, նախ՝ ամենայն օրհնութեանց արժանաւոր պարոն Աթաբակին և այլ ամենայն ազատաց։ Նաև յիշել ի տէր զամենայն տանուտեարսն աստուածաշէն երկրիս Մարայ, նախ Ջազին...»[40]։

Ուրեմն, Ջաղան Խաչենի ամենայն տանուտերերի շարքում նախապատիվն էր և 1411 թ. կենդանի էր։

Սակայն ինչո՞ւ Ջալալի իշխանությունն ընդմիջվել է Ջազայի՝ շուրջ մեկ տասնյակ տարիների իշխանությամբ։

Մատթեոս Մոնոզոնի պատճառաբանությունը 1417 թ. առումով, թե «Ջալալն և որդիք նորին... են ի ներքոյ ձեռին անօրինացն», կարող է նշանակել և՛ օտարների տիրապետության տակ գտնվել, և՛ գերություն, բացակայություն Խաչենից։ Հայտնի է, որ բնակչությանն ու իշխանազուններին գերեվարում էին ոչ միայն Կարա-Յուսուֆի ժամանակ, այլև նրանից առաջ, իշխանազուններին՝ հատկապես, որովհետև այս վերջիններից էր, որ կորզում էին մեծ փրկագին։ Հնարավոր է, որ հենց այդ ամբողջ ժամանակ էլ Ջալալը գերության քշված լիներ, մի հանգամանք, որ տոհմակից Ջազային իրավունք կըտար վարելու իշխանությունը։

Ջաղան Ջալալի տոհմից էր՝ հասկանալի է։ Հիշատակագիրը խոսելով նրա մասին, ավելացնում է՝ «յաղգէ սորին Ջալալն»։ Սակայն, հավանաբար, եղբայրը չէր։ Այլապես այսքան մոտիկ արյունակցությունը կնշվեր տեղացի հիշատակագրի կողմից։ Կարծում ենք, նա եղել է Ջալալ Մեծի հայր Աթաբակի եղբայրը։ Այս կերպ նա կարող էր ունենալ Ջալալ անունով որդի և, եղբայր

---

38 Նույն տեղում։

39 Նույն տեղում, էջ 187։

40 «ԺՆ, Ա», էջ 122—123։ Առաջին ընդօրինակող Փիրղալեմյանը (Նստարք, էջ 40) «Ջաղին»-ի տեղ կարդացել է «Ջաղիկ», որ, կարծում ենք, հիշտ չէ, քանի որ սա ուրիշ մարդ չէր, քան Ներքին Խաչենի տեր Ջաղան։

Աթաբակի որդի Ջալալից տարբերելու համար էլ, սրան պիտի կոչեին Ջալալդավլէ։

Այսպիսով. Աթաբակ Բ-ն ունեցել է Ջազա, Էլեգում և Էլեգան եղբայրներ։ 1417 թ. առաջ Ջազան մահացած էր, իսկ մյուս երկուսը գտնվում էին «ի ներքոյ ձեռին անօրինացն»։

Ջալալ Մեծ (մահացած 1431 թ.) իշխանն ունեցել է շատ որդիներ, որոնցից աղբյուրները հիշում են Աղբաստին, Մեջլիսին, Աղեկին, Ամիր-Հասանին, Հովհաննեսին, Վարդանին։ Դարավերջին վերաբերող նյութերում հիշատակված է նաև մի Աթաբակ, որ, հավանաբար, նրա որդին է եղել, քանի որ Ջալալն իր որդիներից մեկին անպայման պետք է կոչեր իր հայր Աթաբակի անունով։

Ջալալ Մեծ իշխանին հաջորդեց Աղբաստը՝ մի ակնառու գործիչ, որի մասին աղբյուրները խոսում են պատկառալից մեծարանքով։

Մեզ հասած վիմագրական առաջին տեղեկությունն Աղբաստի մասին՝ Ջալալի որդի Վարդանի նվիրատվությանն է վերաբերում. «Ես տէր Վարդան... տվի Ծակ Խաչին հողն ի սուրբ ուխտս Գանձասարա յիշխանութեամբ Աղբաստու... թվին ՊՂԲ» (1443)[41]։

Աղբաստին վերաբերող հաջորդ հիշատակությունը մեզ է հասել վերոհիշյալ հողային վեճի առիթով։ Հասան-Ջալալյան տոհմի երկու պայազատների՝ Ջալալի թոռ, Մեջլիսի որդի Ուլուբեկի և Արղութինի թոռ, Մեհրապի որդի Շահանշեի միջև սահմանային վեճ էր ծագել։ «Մեր հայրենեացս մէջն խաւսք իլաւ, պարոն Ուլուպէկին թալեզ մէկ մարդ մեռաւ» («մեր հայրենիքների վրա վեճ եղավ, պարոն Ուլուբեկի կողմից մի մարդ մեռավ»)։ Եվ այս վեճը լուծելու համար երկու կողմերը գնացին Աղբաստի մոտ։ Աղբաստը, նախ, «երեք սահրատին վեր արիւն կապեց»[42], ապա սահմանեց յուրաքանչյուրի հայրենաբաժին հողամասերի սահմանները (բոլորը գտնվում էին Առաջաձոր գյուղի շրջակայքում, Գանձասարից արևելք)։

Այս գործարքի վկաներն են՝ Գանձասարի վանքի առաջնորդ Եղիան, Ջալալի որդի Հովհաննես կաթողիկոսը («Թոռն Մեծին Աթապէկին»), Ջալալի մյուս որդիները՝ Աղբաստը, Աղեկը, Ամիր-Հասանը, Տուրսունի որդի Միրզալին (ճիշտը՝ Միրզաբեկ, որը մի արձանագրությամբ հաստատվում է որպես Ջալալի թոռնորդի)[43] և Պաստամը։ Թիվն էր ՋԵ (1456)[44]։

Վերջում, առանց հայրանվան հիշատակված Պաստամը ևս Ջալալ Մեծի որդին է եղել։ 1471 թ. նա Գանձասարի ուխտին է նվիրել «Կոնճի հողին կալէն վերն»՝ ներկայանալով որպես «Պաստամ որդի Մեծին Ջալալին»[45]։

Ուրեմն, Գանձասարի վանահայր Եղիայից բացի, մյուս բոլորի Հասան-Ջալալյան տոհմին պատկանելն անառարկելի է։ Հավանաբար Եղիան ևս նրանց տոհմակիցն է եղել, որովհետև, ինչպես վերն ասացինք, XIII դ. վերջից սկսած Գանձասարի առաջնորդությունն այդ տոհմի ժառանգական արտոնություն էր հանդիսանում։

---

41 «Գանձասար», № 22։

42 Ըստ երևույթին նշանակում է՝ արյունհեղությանը վերջ տվեց, կամ թերևս, որևէ սովորություն է եղել [illegible] ն կապելու, որով վերջ է տրվել կռվին։

43 Արցախ, էջ 178.

44 Նույն տեղում, էջ 187։ Մակար եպիսկոպոսն այս հիշատակարանն արտագրել է Առաջաձորի եկեղեցու մի ձեռագիր Աստվածաշնչի Հռութի գրքի վերջից։

45 «Գանձասար», № 25։

Հովհաննես կաթողիկոսն Աղվանից հայրապետությունը վարել է երկար տարիներ. նրա կաթողիկոսությունն առաջին անգամ հիշվում է 1428 թ.՝ «յաշխարհիս Աղուանից, ի վիճակս Ամարասայ, ի դեղս Շոշու կոչեցեալ» գրված մի ավետարանի հիշատակարանում[46]։

Հետո գրիչները նրա հայրապետությունը հիշում են 1456[47], 1464[48], 1466[49], 1468[50] թթ.։

Այս ժամանակներում Աղվանից կաթողիկոսական աթոռը դեռևս Մեծառանից սուրբ Հակոբա վանքում (այժմյան Քոլատակ գյուղի մոտ) էր գտնվում։ Հովհաննեսն այնտեղ կանգնեցրել է մի փառահեղ խաչքար (1469 թ.)։ Այդ խաչքարն առաջին անգամ մասամբ նկարագրել և գիրը լրիվ արտագրել է խաչիկ վարդապետ Դաղյանը։ «Ես տր Յոհաննէս կթկս որդի Ջալալին մեծ իշխանի կանգնեցի զխաչս ի փրկութի հոգոյ իմոյ։ Որք երկիրպագէք, աղաւթս յիշեցէք թվ. ՋԺԸ» (1469)[51]։

Սա Հովհաննես կաթողիկոսի վերջին արձանագրությունն է։ Նա մահացել է հաջորդ տարին և թաղվել ս. Հակոբա վանքում։ Նրա հուշարձանի վրա այժմ էլ ընթերցվում է տապանագիրը. «Այս է հանգիստ տր Ովհանէս կթղս Աղվանից թվ. ՋԺԹ» (1470)[52]։

Ինչո՞վ են հայտնի Առաջածորի հիշատակարանում թվարկված մյուս անունները։ Աղեկի ու Ամիր-Հասանի մասին այլուր տեղեկություններ չկան։

Վարդանը հոգևորական էր՝ ըստ իր մի նվիրատվական արձանագրության (1443)[53]։

Անմիջապես Մեջլիսին վերաբերող տվյալներ չկան։ Բայց նրա որդի Ուլուբեկը դեռևս 1407 թ. Գանձասարին նվեր տալու առթիվ թողել է հետևյալ արձանագրությունը. «...ես Ուլուբէկս՝ որդի Մեջլիսին, տվի զիմ հայրենի հողն Ղուզտանոսի կտուրն, որ ի Վարդան բերանցէ իւր սարհատովն ի սբ ուխտս Գանձասարայ իմ հոգոյ յիշատակ. յառաջնորդութեան Մատթէոս վարդապետին և իշխանութեան Զաղին... ՊՄԶ (1407) թվին»։

Այս արձանագրությունն արտագրել է միայն Հովհ. Շահխաթունյանցը[54] և այն էլ Նուռի Հասան-Ջալալյանց կաթողիկոսի ձեռագիր տետրակից։ 1431 թ. մահացած Աղպաստի թոռ Ուլուբեկը դեռևս 1407 թ. հողամաս է նվիրել վանքին՝ իր «հոգոյ յիշատակ»։ Սա կարող է թյուրիմացություն համարվել։ Սակայն հանգամանքները դալիս են հաստատելու, որ թյուրիմացություն չկա։ Ուլուբեկը որդին էր Մեջլիսի և, ինչպես Առաջածորի հիշատակարանն է հաս-

46 Մատենադարանի ձեռ. № 8211, հմմ. «ԺԵ, Ա», էջ 384։

47 Մատենադարանի ձեռ. № 9223, թ. 2ա։ Հմմ. «ԺԵ, Ա», էջ 66։

48 Մատենադարանի ձեռ. № 8453, թ. 200բ։ Հմմ. «ԺԵ, Ա», էջ 219։

49 «ԺԵ, Ա», էջ 244։ Նույն տեղում, էջ 245. Լեղանի ս. Աստվածածին վանքում գրված անթվակիր մի ձեռագրի հիշատակարանի տվյալներից ելնելով՝ Լ. Ս. Խաչիկյանն ավետարանի ընդօրինակման տարի է համարում 1466 թ.։ Այստեղ ևս հիշատակված է Հովհաննես կաթողիկոսը։

50 Դ-ր Հ. Համազասպ Ոսկյան, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 162. «Ի թվ. Հայոց ՋՁԷ» հեղինակը կարդացել է 1467, որն ուղղել է Լ. Ս. Խաչիկյանը՝ 1468 թ. (տե՛ս ԺԵ. Ա, էջ 272)։

51 «Բանասեր», 1901, հ. III, պրակ Բ, Գ. էջ 138։

52 «Բանասեր», էջ 139։

53 «Գանձասար», № 22։

54 Շահխաթունեանց, Բ, էջ 374—375։

տատում, է՛ր նաև «Թոռն Մեծին Ճալալին»։ 1407 թ. սխալ չի կարելի համարել, որովհետև նվիրատվությունը կատարվել է Մատթեոս Մոնոզոնի առաջնորդության օրոք և հատկապես Ջազայի իշխանությամբ։ Իսկ Ջազան 1417 թ. մահացած էր արդեն։ Նշանակում է Աղբաստն է՛լ էր երկարակյաց, նրա թոռ Ուլուբեկն է՛լ. պապն իշխանության գլուխ էր դեռևս 1383 թ. և մահացավ 1431 թ., իսկ թոռը, որ 1407 թ. հասուն մարդ էր ու նվեր էր տալիս վանքին, 1456 թ. դեռևս կենդանի էր և հողային վեճ ուներ տոհմակիցների հետ։

Միրզաբեկը հիշատակարանի տվյալով՝ Տուրսունի որդին էր։ Ո՞վ էր Տուրսունը։ XV դ. կեսերին Ծարա ճյուղում կար մի Տուրսուն՝ որդի Աղբուղին և հայր Այտինի[55]։ Սակայն Ներքին Խաչենի Տուրսունի մասին ունենք նաև անմիջական տեղեկություն՝ Գանձասարի վանքում իր իսկ թողած արձանագրությունից. «Ես Տուրսուն՝ թոռն Մեծին Ջալալին, տվի Մսերսին հողն ի սբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տր Ներսէսի... ՋԽԲ (1493) թվին»[56]։

Այստեղ ևս ժամանակագրական հետաքրքիր պատկեր է ստացվում. հայր Տուրսունը վանքին նվեր է տվել 1493 թ., իսկ նրա որդի Միրզաբեկը 1456 թ. արդեն այնքան հասուն մարդ էր, որ կարող էր հողային վեճ լուծելուն մասնակցել։ Տարօրինակ է, սակայն ոչ անհավանական, որովհետև խաչենցիների երկարակեցությունը հայտնի իրողություն է։

Մեծն Ջալալին 1431 թ. փոխարինել էր Աղբաստը, Աղբաստին էլ 1456 թ. հետո փոխարինեց նրա ավագ որդի Սայտունը։ Ըստ երևույթին նրա ոչ այնքան տևական իշխանապետությունը նախորդների փառքն ու հզորությունը չի ունեցել։ Բայց այս առթիվ դժվար է վճռական խոսք ասել, քանի որ շուրջ մեկ տասնամյակ ընդգրկող այն ժամանակահատվածը, որ կա նրա հոր մասին պահպանված վերջին հիշատակության և նրա միակ անմիջական արձանագրության թվականի միջև, այնքան զուրկ է մատենագրական ու վիմագրական նյութերից, որ նույնիսկ նրա տոհմային հոգևոր կենտրոնում՝ Գանձասարում որևէ էական արձանագրություն չի թողել։

Սայտունն ունի միայն մի արձանագրություն Գանձասարի վանքում. «Ես Սայտունս՝ որդի պարոն Աղբաստին, տվի յիմ հայրենացս զՏանձաձոր ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդությամբ տէր Եղիային թվիս ԹՃԺԶ» (1467)[57]։

Հնարավոր է, որ 1467-ին հաջորդող տարիներից մեկում էլ մահացած լինի Սայտունը, որովհետև 1471-ին գրված արձանագրություններում նրա անունը չի հիշատակվում։ Այս թվականից նվիրատվական երեք արձանագրություն կա։ Մեկը պատկանում է Պուսաղին ու Վախտանգին[58], երկրորդը՝ պարոն Փիրհամզի որդի Սմպատին[59], իսկ երրորդը՝ Ջալալ Մեծի որդի Պաստամին[60]։

---

55 Տե՛ս Արցախ, էջ 208։

56 «Գանձասար», № 28։ Շահխաթունյանցը (Բ, էջ 375) ՋԽԲ-ն կարդացել է 1463։

57 «Գանձասար», № 23։ Արտագրողներն այս արձանագրությունն ընդօրինակել են աղավաղումներով. Շահխաթունյանցն արտագրել է Եսայի կաթողիկոսի տետրակից՝ նկատի առնելով սոսկ բովանդակությունը, Ջալալյանցը (Ա, էջ 185—186) թվական չունի, «Աղբաստինի» փխ. «Աղպատա», Արցախում թվականը «ԹՃԺԶ» է (1507), որ ակնհայտ սխալ է, քանի որ Ժ-ն տեղում պարզ երևում է։

58 «Գանձասար», № 24։

59 Նույն տեղում, 26։

60 Նույն տեղում, 25։

Վերը տեսանք, թե ով է եղել Պաստամը։ Կոնկրետ տեղեկություններ չըկան մյուսների մասին։ Առաջին երկուսից «Վախտանգ» անունը հուշում է, որ կարող է պատկանել Վախտանգ-Տանկիկից սերված ճյուղի որևէ երկրորդական պայազատի։ Իսկ «Սմպատ որդի պարոն Փիրհամզի» մասին դժվարանում ենք որոշակի խոսք ասել առկա նյութի հիման վրա, որովհետև այս ժամանակներում Խաչենի տարածքում հիշվում են նշանավոր (իշխանաղուն) մի քանի Փիրհամզաներ, որոնցից ամեն մեկի որդին էլ կարող էր Գանձասարի վանքն ուխտ դնալ և սիրարանել նվիրատվությամբ[61]։

Սայտուն իշխանին (կամ այս ժամանակներում առավել գործածական տերմինով պարոնին)[62] փոխարինեց նրա որդի Վելիջանը։ Դժվար է ասել՝ թե ո՞ր թվականից։ Սակայն 1473 թ. նա արդեն պարոն է հիշված։ Այդ թվականին Խաչենաձորի Դիտամիջի ս. Աստվածածին վանքում ընդօրինակված ավետարանի գրիչն իր ժամանակը նշում է որպես «ի տէրութեան տեղւոյս պարոն Վէլիջանին»[63]։

Պետք է ուշադրություն դարձնել այս կարևոր հանգամանքի վրա. Դետամիջի ս. Աստվածածին վանքը Ծարա ճյուղի երկրորդ հոգևոր կենտրոնն էր ինչպես XV դ., այնպես էլ նրանից առաջ ու հետո։ Եթե այնտեղ գրվող հիշատակարանում «տեղւոյս տէր» է համարվում Ներքին-Խաչենցի պարոն Վելիջանը, մանավանդ այն պարագային, երբ Ծարա ճյուղն ինքն արդեն բաժանվել էր մանր ոստերի[64], պարզ է, որ Ներքին Խաչենի տերն է եղել ամբողջ Խաչենի գահերեց իշխանը։ Մի հանգամանք, որ նկատեցինք նաև նախորդ դարի իրողություններում, հակառակ վերոհիշյալ հետազոտողների այն պնդումի, թե Ներքին Խաչենն այդ ժամանակ, իբր, անցել էր Ծարա տեր Դոփյանների իշխանության տակ։

Վելիջանի անունից առաջին արձանագրությունը Գանձասարում 1480 թ. է։ Նա վանքին նվերներ է տվել իր և եղբայրների անունից, սակայն հիշել միայն իր անունը. «...Ես Վելիճան եւ եղբայրքս իմ՝ որդիք Սայտունին, Թոռն Մնծին Աղպատու տեառն Խաչինո, տուաք Ալմաճայ իւր Դ (4) սահմանաւն ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Ներսէսի թվիս ՉԻԹ»[65]։

61 Խաչենի ու Դեղարքունիքի Փիրհամզաների մասին՝ տե՛ս Դոփյանք, էջ 99—100, Ս. Բարխուդարյան, Դեղարքունիքի մելիքները և տանուտերերը ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի («Բանբեր մատենադարանի», 1967, № 8, էջ 194—197)։

62 Կիլիկյան հայոց թագավորության ժամանակից սկսած՝ գործածական էր ֆրանսերեն «baron»-ի հայացված «պարոն» ձևը, որ նշանակում է տեր, իշխան, ազնվական-ավատապետ։ Հետագայում աստիճանարար այն դարձավ հարգալից վերաբերմունքի արտահայտություն՝ սովորական պատվանուն, որով կարող են կոչել ոչ միայն ազնվական ծագում ունեցողներին (տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1931, էջ 993—995)։

Քննության առնվող արձանագրություններում, ի՞նչ խոսք, որ «պարոն» գործ է ածված միայն իր նախաստեղծ իմաստով՝ իշխան, իշխանապետ։

Նկատելի է նաև, որ հիշյալ տիտղոսով պատվում էին ոչ միայն աշխարհիկ իշխանավորներին, այլև հոգևոր բարձրաստիճան գործիչներին։ Սարգիս գրիչը Խաչենաձորում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում հիշում է մի «արքեպիսկոպոսի, որ վառեալ չահ է եկեղեցւոյ, պարոն տէր...» (Արցախ, էջ 247։ Հմմտ., ԺԵ, Բ, էջ 344)։

63 Արցախ, էջ 247, ԺԵ, Բ, էջ 344։ Արցախում թվական է նշված ՉԽԲ (1493)։ Լ. Ս. Խաչիկյանն իրավամբ այստեղ նկատել է Ի և Խ տառերի շփոթություն, հաշվի առնելով, որ ՉԽԲ (1493)-ին հիշատակարանում հիշված Ուղուն Հասան խանն ու Արիստակես կաթողիկոսն արդեն մահացած էին։

64 Տե՛ս Մատենադարանի ձեռ. № 7821, թ. 2բ։

65 «Գանձասար», № 27։

Վելիջանի մի այլ արձանագրությունն էլ 1507 թ. է, որ նշանակում է, թե նա շատ երկար է իշխել՝ ամենաուշը XV դ. 70-ական թվականների սկզբից մինչև XVI-ի առաջին տասնամյակի վերջը՝ շուրջ 40 տարի։ 1507 թ. նա խաչ է կանգնեցրել, որի արձանագրությունն է. «Ի թվիս ՋԾԶ... ես Վելիճանս՝ որդի պարոն Սայտունին, թոռն Մեծին Աղբաստոյ կանգնեցի (զ)խաչս...»[66]։

Նախորդ արձանագրությունից գիտենք, որ Վելիջանն ունեցել է նաև եղբայրներ։ Նրանցից միայն մեկի անունը հայտնի է մի արձանագրությունից, որ դարձյալ գտնվում է Գանձասարում. «... Մելիքս՝ որդի Սայտունին, թոռն Մեծին Աղպաստու, տվի շուրջար, ըսկի ու այլ ընծայ Կակաչանց, Փուտուռանուց, Մաղկաւանց Բ ըստակն գնեցի, տվի ի սուրբ ուխտս Գանձասարա թվիս ՋԽԸ» (1490)[67]։

Վկայակոչված վիմագրական ու ձեռագրական փաստերը հաստատում են, որ Ներքին Խաչենի իշխանությունը մոնղոլական տիրապետության շրջանի ու դրան հաջորդող ժամանակների հայկական այն եզակի վարչական միավորներից էր, որոնք պահպանեցին իրենց գոյությունը։ Նկատելի է նաև, որ այդ իշխանության ներկայացուցիչներն են եղել ամբողջ Խաչենի տարածքի գահերեց իշխանները։ Հենց այդ իրողությամբ էլ պիտի բացատրել, որ XV դարից սկսած՝ Ներքին Խաչենի տեր Հասան-Ջալալյան տոհմի պայազատներին անցավ նաև Հայոց արևելից կողմանց կաթողիկոսական գահի ժառանգական արտոնությունը։

КНЯЖЕСТВО НИЖНИЙ ХАЧЕН В XIV—XV ВВ.

Б. А. УЛУБАБЯН

Резюме

Накануне монгольского нашествия Хаченское княжество разделилось на три ветви: Нижне-Хаченская, Хатеркская и Верхне-Хаченская или Царская. Хатеркская ветвь постепенно утратила свои позиции, а Нижне-Хаченская и Верхне-Хаченская, превратившиеся в самостоятельные княжества, выдержали трудные испытания, причиненные монгольскими, тюркскими и персидскими завоевателями.

На основе рукописей-хроник, созданных в XIII—XV вв., памятных записей и лапидарных надписей мы приходим к следующим выводам:

а) княжение представителей дома Хасан-Джалалянов в течение указанного периода не прерывалось;

б) владения Нижне-Хаченского княжества, даже частично, никогда не переходили в руки верхне-хачеицев;

в) XIV—XV вв. сюзеренными князьями на территории всего Хачена являлись Хасан-Джалаляны, которым, в силу сюзеренства, перешла также верховная духовная власть края; в XIV в. католикосат Агванка стал наследственной прерогативой Хасан-Джалалянов.

---

66 «Գանձասար», № 32։

67 «Գանձասար», № 31։